

ՀԱՄԱՍՏԵՂ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

(Շար. տե'ս «Բազմ.» 1966, ք. 11-12, էջ 325)

Ի՞նչ պիտի մնայ Համաստեղին: Ան՝ ոչ որպէս խորհուրդ, կամ որպէս բանաստեղծ եւ կամ երգիծաբանական փորձերու հեղինակ, այլ որպէս զիւղական պատկերներու վարպետ նկարիչ, պիտի մնայ անմոռանալի, որովհետեւ անոր արտայայտութիւնը եղական ու անձնական նկարագրով մը յայտնուած, անմահ՝ Խարբերդի ծոցէն ելած ուրիշ գրադէտներու, ինքնին առանձին զեղեցիկութիւն մըն է, որ չի կրնար կորսնցնել իր արժէքը: Այդ ոճի տարրերը կը կազմեն նախ՝ շրջանակի մը ընդգծումը, որոնց մէջ կը գետնդէ ան իր նիւթը ու գործող անձերը, կարողութիւն՝ դիտելու եւ վեր հանելու տիպարները այնպիսի յատկանշական դոյներով ու մանրամասնութեամբ, որ անչիփթելի են ուրիշ դէմքերու հետ: Իւրաքանչիւր պատմուածք ինքնակազմ գործ մ'է, նման չնորհալի արուեստագէտ նկարչի մը պատանդներուն, թելադրիչ, խօսուն եւ լոյսով ողորուն: Նմանապէս դիտելի է իր նկարագրելու շնորհքը՝ երանգով, բանաստեղծական շունչով ջերմացած, այնքան որ ցամաք ու աննշան բաներն անգամ կը ստանան գրաւիչ եղանակ. այսպէս Լուսա աղբարը պատմուածքին մէջ աղաւնիներու նկարագրութիւնը՝ արեւով լեցուն, կեանքով ու հոգեբանութեամբ թրթռուն: Յետոյ հոգեբանական անդրադարձութիւնները՝ որով դիտէ վերլուծել մարդկային հոգին՝ իր խոր ծալքերով. ասիկա իր բուն արուեստն է, զիստորապէս վերհանումով կանացի ծածուկ զգացումներու, սիրոյ տանջող բարդու-

թիւններուն, յոյսերուն, անկումներուն թափանցող ուժգնութեամբ, ինչպէս Սպասում պատմուածքին «էլէտնոր»ը, Յուցատախտակի «Հելէն»ը, զեղձանիկի պէս թրթռուն ու զեղեցիկ, որ զոհը կ'ըլլայ կեանքի վրիպումներուն, սիրային անփորձութիւններուն, եւ կամ Անտվոր կիներ պատմուածքի «Հիւտա»ն՝ որ կնոջ ձերբադատումի ձգտումին դօրեղ շնչով կը բարձրացնէ: Այս պատմուածքը, որ աւելի նորալէս մըն է, կը փաստէ Համաստեղի մէջ այն դմայելի եղանակը հոգեբանական վերլուծումի, որով դիտէ տաք ու կենդանի ոճով շնչուն ու ջերմացնել պահերը, նոյնիսկ աննշան մանր դիպումներու մէջ, ինչպէս է հոս, առանց տարիակոթեան, չըջելով նոյնիսկ դէպքերու կարգը, որպէսզի պատմումը առնէ ճշտաբարբառական ու լարուած ընթացք:

Համաստեղ, ըլլա՛յ իր զիւղական պատկերներու մէջ, ըլլա՛յ ամերիկեան միջավայրէն առնուած եւ կամ ընդհանուր մարդկային սրտի կեանքէն, չի հեռանար իր ընդհանուր եղանակէն արտայայտութեան՝ տալու պարզին զեղեցիկութիւնը՝ խիտ, ամփոփ, աւելորդաբանութիւններէ խուսափող եւ քանդակիչ ձեւով: Իր մէջ բնածին է գրական տաղանդը՝ որ կը պարտադրէ ինքզինքը. ասով է որ անիկա կը տարրերի սովորական զիւղադրէ մը, օրինակ՝ Վահան Յարութիւնեանէ մը: Որովհետեւ զիւղն ու Համաստեղ հոգեպէս այնպէս համաձուլուած են՝ որ զիւղը եւ Համաստեղ միութիւն մը կը կազմեն, եւ սա կը զգայ զայն այնպիսի ջերմութեամբ

մը՝ որ հոգեխառնում մը դարձած է այլեւս իրեն հետ: Նիւթը զգալը՝ անհրաժեշտ պայմանն է գրական յաջողութեան, եւ Համաստեղ խորապէս կը զգայ զայն: «Չալօ»ի կամ «Միջօ»ի մէջ ո՛ր է յաջողութիւնը. ոչ անշուշտ սովորական նկարագրով էր ընել, այլ այն հոգեբանական անդրադարձութիւններուն մէջ՝ որով ան կը շարժէ գործողութիւնը, անասունի կեանքին ու շարժումներուն տալով բնական ու կենդանի ապրում, տեղական դոյնի ամբողջ զեղեցիկութեամբ, կենսունակ ու յաւիտենականօրէն նոյն եւ իրական: «Միջօ» ստահակ, անհանգիստ, հոգեպէս բան մը փնտռող ու սիրոյ հրայրքին անդիտակից զոհը, կեանքին մէջ բանաստեղծութիւն տեսնող պատանի մը տիպարին ստեղծումն է, զոր Համաստեղ յաջողութիւն է տալ, վասնզի զգացած է, ճշգրտապէս անձնաւորելով անոր հոգեբանական վիճակը: Բացի ասկէ, ինչպէս ըսուեցաւ, Համաստեղ դիտէ դոյն զնել, տաքցնել արտայայտութիւնը՝ բանաստեղծական թեթեւութեամբ, երբ հարկ է. օր. «Մարուշ» տերեւներուն մէջէն կը լսէ ձայնը իր նշանածին (Համբարը պատմուածքին մէջ) կամ լուծութիւնը՝ որ խորհուրդ մը կը դառնայ «երկնքի մը չափ լայն ու անպարզելի»: Մատաղատի ու անխորձ այդ էակին երեւակայութիւնը, յուզումը, սրտին ջերմութիւնը այնքան բնականօրէն ու քնքշութեամբ արտայայտուած է, որ այդ պատմուածքը կը թըրթռայ իսկական բանաստեղծութեամբ:

Համաստեղ ապրիլ կու տայ իր ընթերցողներուն: Եւ արդարեւ, թէ՛ իր պատմութիւններուն, զիւղական կամ ոչ, եւ մուծքներուն, զիւղական կամ ոչ, եւ թէ՛ մեծածախ Սպիտակ Զիւղի, դէժանոր մասնական կտորներուն մէջ, կանաչ արուեստագէտի հաղորդակատարեալ արուեստագէտի հոգիները, ու նութեամբ լեցնելով մեր հոգիները, ու մենք կ'ապրինք իրեն հետ ու կը յորդինք: Գրական այս հաղորդականութիւնը ներգործիչ է անոր համար՝ որ Համաստեղ զործիչ է անոր համար՝ որ Համաստեղ զիտէ տալ, պարզունակ եղանակով, բնականին լիարուեստ զգացողութիւնը, սրտին

խօսող ջերմութեամբ մը, առանց փնտռելու ձեւեր կամ դարձուածքներ, որոնք կը մատենեն գրադէտի մը մէջ ճիշդ ու տառապանք: Պարզ է ինքը իր նկարագրով, ինչպէս են պարզ ու բնական՝ իր զիւղին մարդերն ու պատկերները: Ան բացորոշակի կը հեռանայ այն զիւղադիր հեղինակներէն՝ որոնց թիւը շատ է, մանաւանդ արեւելահայ գրականութեան մէջ, մնացած գրական գեղջկականութեան մէջ, առանց կարենալ բարձրանալու, առանց զրական ինքնատիպ ոճի մը տիրանալու:

Արեւմտահայ գրականութեան մէջ Թըլկատինցի, Չարդարեան ու Համաստեղ՝ երբեք միութիւն մը կը կազմեն զազափարի, ներշնչումի՝ դաւառական դժով, բայց տարբեր՝ իրենց նկարագրով եւ անձնականութեամբ: Եթէ կարելի է Թըլկատինցին համարիլ զեղարուեստագէտ հիմնադիրը դաւառական գրականութեան, Չարդարեան՝ անոր արուեստագէտ ոճաբանը դասական մաքուր շունչով, որ ձեւական զեղեցիկութիւնը կը փնտռէ ամէն բանէ առաջ, Համաստեղ է, ընդհակառակն, զիւղին հարադատ պատկերահանը, բնական, անկեղծ ու միամիտ զգայնութեամբ սողորուն: Թըլկատինցի իր բոլոր դըրուածքներուն մէջ ընդհանրապէս խորհող մըն է, խառնելով երբեմն բանաստեղծական հով մը, բարեխառնելու համար իր արտայայտութիւնը, սակայն Համաստեղ, մնալով հանդերձ անոնց պէս ճշմարիտ զիւղի դաւակ, յաջողած է գրական զիւղադրութեան մէջ ստանալ կատարելագործուած եւ անմրցելի առաջնութիւն: Չարդարեանի «Գամբռ»ին դէմ Համաստեղ տուած է իր «Չալօ»ն, բայց ո՛րքան տարբեր են անոնք՝ իրենց ուրոյն ստեղծագործութեամբ: «Գամբռ» Չարդարեանի համար՝ զիւղին շունը չէ, այլ լեռներուն զաւակը, որ իր ցեղին աղնուականութիւնը կը մարմնացնէ, որ այլեւս ծերացած եւ հերթափոխ արգահատանքի արտայայտութիւն մը տեսնելով իր տիրոջ աչքերուն մէջ եւ «արհամարհելով արհամամքը» թողած է լեռնային մենութիւնը ու լիւծ քաղաք, վերաւորուած իր վսեմութեամբ:

թեան եւ հպարտ անասունի մը պատուոյ զգացումին մէջ: Պատկեր մըն է Չարդարեանի դործը, խորհրդանշիչ մը բարձր դասակարգի մարդոց, որոնք յանկարծ կորսնցնելով իրենց ազնուականութիւնը՝ կ'իյնան ստորին դասակարգի խեղճութիւններուն մէջ, բայց պահելով իրենց գիտակից վսեմութիւնը, արհամարհելով նախատինքը լռիկ ու վսեմ կեցութեամբով:

Համաստեղի «Ջալօ»ն ուրիշ բան է բոլորովին, ծնունդ՝ տարբեր յղացումի: «Ջալօ» կարծէք զիւղին մէկ անգամն է, հոն ծնած, հոն ապրած եւ հոն քաջութիւններով համբաւ շինած, փնտռուած ու սիրուած, բայց ծերութիւնը մատնած է հուսկ զինքն ալ կրելու լքում, արհամարհանք: «Ջալօ» կենդանի ապրում մըն է հեղինակին աշխոյժ ու տաք նկարագրութեան մէջ, այնքան տաք ու բնական՝ որ ըլլար պահապան ոստիկանը զիւղին, հաղորդուած բոլորին հետ, մանուկներէն մինչեւ երէցփոխը, մինչեւ վերջին հեղինակութիւնը զիւղին. ապրում մը վերջապէս իր տեղական գոյնով եւ առարկայական բոլոր մանրամասնութիւններով, եւ ոչ թէ խորհրդանշական դուռ պատկեր մը ինքնիր մէջ եւ զիւղէն անջատ:

«Գամբուր» եւ «Ջալօ» կը ներկայացնեն երկու տարբեր ոճերու վկայութիւններ. մին մտքի գործ է, միւսը՝ աչքի: Չարդարեան ուզած է աշխարհութիւն մը ըստեղծել, իմաստասիրական խորք տալով, իսկ Համաստեղ՝ մնալով հաւատարիմ կեանքին ու իրականութեան, տալ ճշմարիտ ու չօչափելի մանրամասնութիւններով ինչ որ իրականին մէջ կայ ու կ'ապրի: Չարդարեան կը գրէ, կարծէք, գրականութիւն ընելու համար, փնտռելով «զեղեցիկը» արտայայտութեան մէջ, Համաստեղ կը գրէ իրականին պատկերը տալու եւ ապրումը շեշտելու եւ վերստին ապրելու համար: Չարդարեան իրապաշտութեան հոսանքի շրջանին՝ ռոմանթիք մը մնացած է, Համաստեղ իրապաշտ մը իսկական առումով:

Համաստեղ մերձեցումներ ունի նաեւ Օշականի հետ, որ իր հոգեւորականութեամբ

հեանք (1922) եւ մանաւանդ Խոնարհները (1920) շարքին պատկանող պատմութեամբներով՝ դաւառական զրականութեան շարժումին նպաստած է, առաջին միջազգային պատերազմէն անմիջապէս առաջ, նախ քան յայտնութիւնը Համաստեղին: Այս երկուքին ոճը, զգայնութիւնը, իրապաշտութեան զգացումը համեմատութեան եղբներ ունին անտարակոյս: Երկուքն ալ կեանքէն կ'առնեն ներշնչումներ եւ կը գրեն իրականութեան պատկերը տալու համար, մանաւանդ արհամարհուած դասակարգի էակներուն, որոնց վրայ հարուստին աչքը վերէն կը նայի: Անոնք սկիզբ կու տան գրականութեան մը, որ պիտի ունենայ յետոյ շատ հետեւորդներ, դաւառական - ժողովրդական գրական հոսանքն ի վեր: Օշական վարպետ մըն է, արդարեւ, քաջքոտուած դոյնութիւններով վրայ՝ կարեկցութեան ցոլքեր նետելու եւ տիպարներ ստեղծելու մէջ: Իր Տօգսանը որրի մը կեանքը կու տայ մեզի, փողոցներու վրայ ինկած թռչուած մը, որ իրր խենթով՝ առարկայ է բոլորին զուարճութեան: Այդ պատմութեամբը կը յիշեցնէ Համաստեղի Փիլիկ աղբարը: Օշականի Տօգսանը ձկնորսի մը պատկերն է, իր ցաւերը օղիին մէջ մեղցնող, ծոյլ ու քմահաճ երիտասարդութեամբ, եւ նոյնքան անշարժ ու զինեմով ծերութեան մը ծանրութեան տակ՝ իր անցեալի յուշերով երազիտ նոպաներ ապրող, որուն նման տիպարներ ունի Համաստեղ ալ: Յետոյ Պաղտօն, դարձեալ խոնարհներու կարգէն, որը մանկութեան հարուստի մը քով ծառայութեան մտած: Պաղտօն, թէեւ փողոցի ստահակ մը չէ, ինչպէս Համաստեղի «Միջօ»ն, բայց ահոր ալ սիրտը, միւսին պէս, սիրոյ փոթորիկով աշխարհ, փոխադարձուած եւ երբեմն ալ արհամարհուած, կը մեկնի թշուառօրէն այս կեանքէն: «Միջօ»ն եւ «Պաղտօն» շատ ուժեղ զգայնութեամբ շինուած էութիւններ են, երկուքն ալ ըզգացումի ջերմութիւն ունին իրենց հոգիին մէջ, որ մերթ կը քաղցրացնէ անոնց

կեանքը եւ մերթ ալ յուսախարութիւններու կը նետէ: Օշականի «Խենդ-Սողոմէն» շնաշխարհիկ զեղեցիկութեամբ օժտուած հարսնուկի մը աղիխարչ պատմութիւնն է, եղբական տուամ մը, առոյգ ու պատկերաւից նկարագրութեամբ, ուր վեր կը հանուի զիւղին հոգեբանութիւնը: Աւելորդ կը համարինք թուել ուրիշ օրինակներ, ցոյց տալու համար համեղագրութիւնը Օշականին ու Համաստեղին:

Խոնարհները հատորին հրապարակ ելլելէն երեք տարի ետք, երբ Համաստեղ կը սկսի անուն մը դառնալ, չէր մոռցըր Օշականի զիւղագրական գրականութիւնը: Անշուշտ երկու վաւերական գրապէսներու առջեւ կը դանդաղէ: Համաստեղ զիւղէն զնահատել Օշականի բերած ծառայութիւնը հայ գրականութեան համար, որ հաւատարիմ իր սկզբունքին, չեղուած իրմէ եւ Մեհեան թերթին շուրջ խմբուած երիտասարդութեան մը կողմէ, նպատակ ունէր դաւառէն եկած նոր ու տոհմիկ շունչով հրահրելու մեր գրականութիւնը, Փրանսական կամ այսպէս կոչուած «ոստանիկ» գրականութեան ապագային նկարագրէն պատճառուած ընդհանրականութեան դէմ պաշտպանելով տոհմային գիծը՝ Պոլսոյ եւ առաջին միջազգային պատերազմի աւարտին՝ նաեւ Ֆրանսայի հայ գաղութին ծոցը յայտնուած գրողներու հոյլին մէջ:

Համաստեղ ուրիշ հոգեգրայր մ'ալ ունի, Ալիսէ Բակունցը, որ զիւղագիր մըն է Սովետական գրականութեան սկզբնական շրջանին, շնորհալի եւ համբաւուած արձակագիր մը, այնքան՝ որքան խիղախ ու զիւցաղնաշունչ Չարենցը՝ բանաստեղծութեան մէջ: Բնորոշիչ նկարագիրը իր արձակին, վերջին ծայր պարզութիւնն է, պատմելու իր հանգարտ եղանակը, մերթ ընդ մերթ լուսաւորուած պատկերաւոր արտայայտութեան ցոլքերով, որոնք գողտրիկ զգայնութիւն մը կը շեշտեն Բակունցին մէջ, մանաւանդ երբ բնութեան եւ սիրոյ զգացումն է որ կը շարժեն զինքը:

Մընաձորը իսաւորի ու տղիտութեան,

նահաւատ մտայնութիւններու եւ անձուկ միջավայրի մէջ դարերով ապրած ժողովուրդի մը կեանքի պատկերներ կը գծէ, զիւղի մարդոց՝ որոնք իրենց արտերուն հոգերով եւ մերձակայ զիւղերու բնակիչներուն հետ պայքարի մտած (տես «Ծիրանի տափը»), կ'ապրին մթութեան մէջ, անջատուած մեծ աշխարհէն, գրեթէ նման Խարբերդի զիւղացիներու ապրումներուն: Բակունց կը տարբերի Համաստեղէն զաղափարի խորքով. վասնզի Նոյեմբերեան Յեղափոխութեան բերած շարժումը շեշտելու ձգտումը յայտնի է միշտ կարգ մը պատմութեամբներուն մէջ, այսպէս «Մթնածորի չարքը» (Մթնածորի չարքին), «Սեւ ցեղերի սերմնացանը» (համանուն չարքին), նմանապէս յաջորդ չարքին կտորներուն մէջ, ինչպէս Անճրեւը, Եղբայրութեան ընկուզեմիները: Սեւ հոգերի սերմնացանն է Յեղափոխութեան նոր մարդը, որ ոսկի հատիկներ կը ցանէ հողին մէջ: Համաստեղի եւ իր մէջ միութեան գիծեր շատ կան. հողին ու բնութեան սէրը, ժողովուրդի ոգին, անպաճօճ կեանքի մը ողեկնուած, որ հետզհետէ կորսուելու վրայ է:

Համաստեղ իր առաջին պատմութեամբներուն մէջ իսկ յայտնուեցաւ գրաւիչ արտայայտութեան մը շնորհքով օժտուած, մինչ Ա. Բակունցի Մընաձորը անկախ զիւղագրութիւն մըն էր պարզապէս, որ յետոյ Սեւ ցեղերի սերմնացանով սկսաւ յայտնել ճիշդ մը ձեւական խնամքի եւ իր արտայայտութիւնն ալ ստացաւ բանաստեղծական երանգ. «Ծիրանի փող» (Սեւ ցեղերի սերմնացան չարքին), օրինակի համար, արդէն զմայլելի էջ մըն է զգացումի: Սակայն, մինչ Համաստեղ կուռ ու առինքնող եղանակ մ'ունի, աշխոյժ պատմութեամբի ոճով, Բակունց ընդհակառակն կը սիրէ ընդլայնել նիւթը, զանազան տեսանկիւններէ շօշափելով զայն եւ խորհրդածութիւններու առատ բաժինով լեցնել: Թէեւ նիւթը իրենց պատմութեամբներուն՝ նոյն է էպոս (զիւղը եւ զիւղական հոգեբանութիւնը), տոհմային բնիկ շունչով համակուած,

բայց տարբեր է արուեստը, տարբեր են ոճական յատկանիշները՝ առաջ եկած ո՛չ թէ լեզուի զանազանությունն է, այլ անոնց նկարագրին զանազանությունն է։ Ամեն պարզային՝ անոնք միջազգային պատերազմ էն ետքը ստեղծում են հայ դրականություն երկու հիմնական դեմքերը կը կազմեն, ազգային-դաւառական կեանքի պատկերը տուող մեծ արձակագիրներ, որոնց մէջ հայրենի հողը պաշտամունք դարձած է, եւ որոնք աւելի կամ պակաս արուեստագէտներ, գիտցած են ստեղծել կեանք, եւ տալ խոսքն ու խելքն իրենց անհատներին։ Երկուքին մէջ ալ կայ անժխտելիօրէն՝ տիպարներ կերտելու մեծ կարողութիւն, խոր ուսումնասիրութիւն մարդկային հոգւոյն եւ սրտի տաքնապնդումն, տառապանքին ու երջանկութեան։ Անոնք եղան դպրոցի մը հիմնադիրներ։ Այսօր երիտասարդ սերունդէն կարգ մը դրողներ, հետեւելով նոյն տոհմային շունչի դրականութեան, տուին մեղի ուրիշ գեղեցկութիւններ՝ արեւմտահայ եւ արեւելահայ դոյզ թեւերուն վրայ, բացի այն լայն խմբակէն, որոնք օգտագործեցին միջազգային առաջին պատերազմին յա-

ջորդող ահաւոր ապրումներու անմոռանալի յուշերը, կամ անձնական տխուր փորձառութիւններու վրայ հիմնուած՝ տուին եղեռնապատումի սահմանեցուցիչ համայնապատկերներ։

Զարմանալի երեւոյթ մըն է իսկապէս Համաստեղի կեանքին ու դրականութեան մէջ՝ հայրենական դիւղին կապուած իր ստեղծագործութիւնը. ան՝ հեռու հայրենի հողերէն եւ անմիջականօրէն ներշնչիչ ապրումներէն, կերտած է իր գլեզաշխարհը՝ երեւակայութեան մը թեւերուն վրայ հեծած, եւ իր սրտին ազդեցութիւն տանելով անոր նիւթն ու կերպարանքը, այնպէս հայեցի եւ տաք՝ որպէս թէ ապրած ըլլար, զրի առած առեւ, հայրենի երկրին կլլմային տակ։ Այս գլծով՝ իր եղբայրութիւնը Ա. Բախուցի հետ աւելի շեշտուած կրնայ համարուիլ, եւ մանաւանդ աւելի եւս զնահատելի, քանի որ կորսուելու մօտ ապրումներ ու զգայնութիւններ փրկելով՝ տուած է մեղի դրականօրէն անմոռանալի վկայութիւններ, որոնց յիշատակը պիտի պահուի անջինջ հայ Սփիւռքի դրականութեան մէջ։

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

ԵԴՈՒԱՐԴ ՊՈՅԱՃԵԱՆ

1966 Հոկտ. 13ին, Եդ. Պոյաճեանի մահով, հայ դրականութեան տաճարին մէջ, կանթեղ մը եւս կը մարէր։

Եդ. Պոյաճեան՝ զրիչի իւրայատուկ վարպետ եւ բացառիկ ինքնատուրութեամբ օժտուած բանաստեղծ, իր լրումին չհասած, իր ըսելիքները չաւարտած, կը մեկնի երկրէս։

Ծնած է Խորապէկ (Մուսա Տաղ) 1915ին։ Իր հայրենակիցներու ծանօթ հերոսամարտէն ետք, ժամանակ մը մնալով

Փորթ-Սայլո, զինադադարին՝ կը վերադառնայ ծննդավայր։ Ուսումը առած է զլիսաւորապէս Պէյրութի Հայկական ձեմարանին մէջ։

Երիտասարդ տարիքէն կը նուիրուի դրական ասպարէզին։ 1944ին կը հրատարակէ «Սէր եւ վիշտ» հատորը, 1948ին՝ «Հողը», 1961ին՝ «Թուղթ զաւակներուս», 1963ին՝ «Տոմար Տարագրի», 1964ին՝ «Երկու նամակներ»։ Մամուլի տակ է «Դէմքեր» հատորը։ Անթիւ դրուածքներ

ունի նաեւ Սփիւռքի զանազան թերթերուն մէջ։

Եդ. Պոյաճեանի քնարին վրայ, փոխն ի փոխ կը թրթռայ երգը սիրոյ, տխրութեան, մահուան, հայրենիքին, տունին, գեղեցիկին, եւայլն։ Մերթ՝ քնարի փոխան, զու շնորհով կը հնչեցնէ երգը պայքարի, արդարութեան, Աստուծոյ, հողին, զիւղին ու զիւղացիին։

Բացի իր անձնական խռովայոյզ ապրումներէն, որոնք հրակէզ սրտէ մը կը բխին, Եդ. Պոյաճեանի ստեղծագործութիւններուն մէջ խոր արձագանքը կայ իր տառապած՝ բայց հերոս ժողովուրդի անցեալին, զգացումներուն, ազատաշունչ հողին, տենչերուն։

Իր տաղանդին, սրտեւս մտքին, անսանձ երեւակայութեան եւ զգայուն հողին շնորհիւ, անիկա կրցաւ արտակարգօրէն ինքնատիպ ոճ մը, յորդարուիլ զրեւանէ մը ստեղծել։

Եդ. Պոյաճեան յաջողած է ա՛յնքան լըման ինքզինքը դնել իր գործերուն մէջ, ա՛յնքան անձնազորով նկարագրել տալ իր երկին, որ կարծես զրիչը իր արիւնին մէջ թաթղած է։ Իր ամէն մէկ տողին մէջէն, ամբողջ սիրտն է, որ կը տրոփէ եւ խռովակոծ հողին կը սաւառնի էջէ էջ։

Իր գրութիւններուն մէջ, ընդհանրապէս, աւելի բուռն զգացում կայ քան մըտածումի խորութիւն։ Բայց, լաւագոյն էջերուն մէջ, զաղափար եւ զգացում ներդնակօրէն ընդելուզուած են։

Փափրակամ բան մը կայ իր խառնուածքին մէջ։ Մութ, անծանօթ բաներու սիրահար, հանքագործի մը նման, միշտ ետեւէ է պեղելու, թաքուն զանգեր երեւան հանելու։ Սուղակ մըն է, որ մարդուս հողին խորը եւ տիեզերքի քառսին մէջ խորասուզուելով կը տքնի, մինչեւ օրս չգտնուած նորութիւններ յայտնարելու։

Ուշադրաւ է իր լեզուն, որ հարազատ հայելին է իր մտածելակերպին եւ իր անհանդարտ հոգիին։ Մովորական աշխարհարարով պիտի չկարենար իր արտասովոր ըսելիքները յայտնել։ Ասկէ՝ ճիւղ մը, մասնաւոր աշխատանք մը՝ նորաստեղծ բառեր, նորաձեւ ասութիւններ կերտելու, որոնք տպաւորիչ ցայտունութիւն մը կու տան իր նկարագրին եւ ինքնատիպ անհատականութեան։

Հրարխային պոռթկումներու հետեւանքով, իր ոճին հաւասարակշռութիւնը մերթ կը խախտի, իր գրութիւնը անբնական ծաւալ կը ստանայ եւ զաղափարներու տրամաբանական դնացքը իր բնականօրէն ուղիէն կը շեղի։

Բայց, այդ տարօրինակ զեղումներուն մէջ, վառ տրոփիւնը կայ իր սրտին, հաճելի ջերմութիւնը իր արիւնին եւ ուժգնութիւնը իր կիրքին։

Կարդալով Եդ. Պոյաճեանի լաւագոյն էջերը, ընթերցողը ախմայ կը մոռնայ ինքզինքը, կը հմայուի եւ կը տարուի այդ բուռն յորձանքէն՝ նոր եւ սխրալի բաներ տեսնելու տրամադրութեամբ։ Եւ քիչ անգամ է որ յուսախար կ'ըլլայ իր ալընկալութիւններուն մէջ։

Իր գործը դրաւիչ դարձնող ազդակներէն մէկն է նաեւ իր անխորհալս, անկաշառ նկարագիրը, ըմբոստ եւ ազատատենչ հայու ոգին, որ միշտ ներկայ է իր գրութեան մէջ։

Եդ. Պոյաճեան մարիկի պէս յայտնուեցաւ, մռայլ ամպերու մէջէն փայլատակեց եւ յանկարծ աներեւութացաւ հայ դրականութեան հորիզոնին մէջ։ Անիկա, մեր արդի դրականութեան վրայ աւելցուց, նոր շողերով լուսաւոր, նոր երանգով ճոխ եւ նոր աւելով զեղուն էջեր։

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ ԴԱԶԱՐԵԱՆ

2535-6

